Հավելված 1
Հաստատված է
«Այդի Բանկ» ՓԲԸ վարչության
2026թ. հունվարի 20-ի N 16-Լ որոշմամբ
Գործում է սկսած 2026 թվականի հունվարի 20–ից

«2% հետվճար Mastercard վճարային քարտերով կատարված վճարումներից» արշավի իրականացման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ.

1.1 **Արշավ՝** «Այդի Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից 20.01.2026թ-ից 20.03.2026թ-ը ներառյալ իրականացվող արշավ:

1.2 **Քարտ՝** «Այդի Բանկ» ՓԲԸ-ի կողմից Արշավի ընթացքում ֆիզիկական անձանց համար նոր թողարկված Mastercard Standard, Mastercard Gold վճարային քարտեր:

1.3 **Քարտապան՝** ֆիզիկական անձ, ով հանդիսանում է Արշավի շրջանակում նոր թողարկված Mastercard Standard, Mastercard Gold վճարային քարտի քարտատեր:

1.4 Արշավին մասնակցելու դեպքում Քարտապանն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները, որոնք համարվում են վերջնական և անվիճարկելի:

2. Արշավի պայմաններ.

2.1 Արշավի շրջանակում՝ 20.01.2026թ-ից մինչև 20.03.2026թ-ը ներառյալ, Mastercard Standard, Mastercard Gold վճարային Քարտ պատվիրած Քարտապաններն Արշավի ընթացքում կստանան մինչև 2% հետվճար Քարտով կատարված ինչպես միջազգային, այնպես էլ տեղական գնումներից: Ընդ որում, հետվճարը գործելու է մինչև 20.03.2026թ-ը ներառյալ կատարված գնումների համար՝ անկախ Արշավի ընթացքում նոր պատվիրված Քարտի օրվանից:

2.2 Արշավի ընթացքում, ինչպես նաև ավարտից հետո մինչև 01.04.2026թ-ը ներառյալ, հաճախորդները հնարավորություն կունենան պատվիրված Քարտերը ցանկության դեպքում անվճար փոխարինելու կամ պատվիրելու նոր ArCa քարտեր՝ առանց առաջին տարվա սպասարկման միջնորդավճարի գանձման: Ընդ որում, ArCa քարտերով կատարված գնումների համար ևս տրամադրվելու է 2% հետվճար՝ համաձայն պետական ծրագրով սահմանված պայմանների: Արշավի ընթացքում նոր պատվիրված ArCa քարտերի թողարկման դեպքում սույն Արշավի շրջանակում Քարտերի համար սահմանված Արշավի պայմանները կդադարեն գործել, փոխարենը Քարտապանին կտրամադրվի ArCa քարտերով կատարված գնումների համար պետական ծրագրով սահմանված հետվճարը:

2.3 IDSalary փաթեթի շրջանակում թողարկված ArCa քարտերը սպասարկվում են անվճար՝ քարտի գործողության ընթացքում:

2.4 Հետվճարի չափը կազմում է մինչև 2% և հաշվարկվում է 1,000 ՀՀ դրամը գերազանցող վճարումներից: Մեկ գործարքի համար հետվճարի առավելագույն գումարը 6,000 ՀՀ դրամ է (հարկումից հետո), իսկ մեկ անձի համար յուրաքանչյուր օրացուցային ամսվա հետվճարի առավելագույն գումարը 60,000 ՀՀ դրամ է (հարկումից հետո): Արշավին մասնակից որևէ անձ չի կարող Արշավի ընթացքում՝ 20.01.2026թ-ից 20.03.2026թ-ը ներառյալ որևէ օրացուցային ամսվա ընթացքում իր կատարած վճարումների համար ակնկալել կամ ստանալ սույն կետով նախատեսված

մեկ գործարքի համար 6,000 ՀՀ դրամից (հարկումից հետո) կամ մեկ ամսվա համար նախատեսված առավելագույնը 60,000 դրամից (հարկումից հետո) ավել հետվճար՝ անկախ Քարտերի քանակից:
2.5 Տվյալ ամսվա ընթացքում գնումների համար հետվճարի վճարումը կատարվում է մինչև հաջորդ ամսվա 10-րդ աշխատանքային օրը:
2.6 Կից Քարտերով կատարված գնումները գումարվում են հիմնական Քարտով կատարված գնումներին:
2.7 Գնման չեղարկման կամ վերադարձի դեպքում այդ գործարքի գծով հետվճարը հանվում է հաջորդ ամսվա համար վճարվելիք հետվճարից:
2.8 Փաստացի ստացման ենթակա հետվճարը Հաճախորդին տրամադրվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված եկամտային հարկի գանձումից հետո: Վճարման ենթակա բոլոր հարկերը պահվում և փոխանցվում են Բանկի կողմից:
2.9 Հետվճար չի վճարվում հետևյալ գնումների համար.

- տեղեկատվության, կապի և կոմունալ ծառայությունների դիմաց վճարներ,
- ՀՀ պետական և համայնքների բյուջեների օգտին կատարվող վճարումներ,
- բարձր ռիսկային վաճառակետերում կատարված գործարքներ («Մեծահասակների համար նախատեսված բովանդակության», «Ծանոթությունների կայքերի և հարթակների», «Խաղատների և խաղային ծառայությունների», «Կրիպտո փոխանակման, կրիպտո դրամապանակների և այլ կրիպտո ծառայությունների», «Թվային ֆայլերի պահեստավորման և հեռակա օգտագործման ծառայությունների», «Ազարտային խաղերի», «Բարձր ռիսկային ֆինանսական առեւտրային հարթակների», «Հեռախոսային մարքեթինգային ծառայությունների», «Ավտոմատ երկարաձգվող բաժանորդագրությունների», «Թանկարժեք մետաղների և քարերի առուվաճառք» վաճառակետերը): Ընդ որում, բարձր ռիսկային վաճառակետերից դեղատները համարվում են բացառություն և դեղատներում կատարված գնումների համար ևս գործելու է սույն Արշավով սահմանված հետվճարի պայմանը:
- ֆինանսական կազմակերպությունների կողմից առաջարկվող ծառայությունների դիմաց ֆինանսական հաստատության օգտին գանձվող ցանկացած վճարումներ և գործարքներ:

2.10 Քարտապանների Արշավին մասնակցությունը կատարվում է ավտոմատ կերպով և լրացուցիչ գործողություն չի պահանջվում:
2.11 Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո: